ACBA-CREDIT AGRICOLE BANK

annual report 2014

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ
էջ–4

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
էջ–5–6

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
էջ 7-10

ԲԱԺԻՆ 2
ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
էջ 11-12

ԲԱԺԻՆ 3
ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
էջ 13-16

ԲԱԺԻՆ 4
ՔԱՐՏԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ
էջ 17-18

ԲԱԺԻՆ 5
ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒԿԱ
էջ 19-20

ԲԱԺԻՆ 6
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
էջ 21-22

ԲԱԺԻՆ 7
ՀԱՄԱՑԱՆՑ
էջ 23-24

ԲԱԺԻՆ 8
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
էջ 25-26

ԲԱԺԻՆ 9
«ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
էջ 27-28

# ԳԼԽԱՎՈՐ **ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ** ԽՈՍՔԸ

## Հարգելի՛ **գործընկեր,**

2014թ. ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի համար լի էր ներքին և արտաքին գործոններով պայմանավորված մարտահրավերներով: Անշուշտ, հաշվետու տարին մեր Բանկի համար ամենահաջողակը չէր, այնուամենայնիվ, արդյունավետ և համախմբված թիմային աշխատանքի շնորհիվ Բանկը շարունակեց պահպանել իր առանցքային դերը Հայաստանի բանկային համակարգում, կարողացավ ապահովել մի շարք ֆինանսական ցուցանիշների աճ, զարգացրեց և բարելավեց հաճախորդների սպասարկման ենթակառուցվածքը, կյանքի կոչեց սոցիալական և բնապահպանական ուղղվածություն ունեցող ծրագրեր:

Ստեղծված տնտեսական և աշխարհաքաղաքական ոչ բարենպաստ իրավիճակում հաջողվեց շուրջ 9%-ով ավելացնել վարկային պորտֆելի ծավալը, ինչպես նաև ապահովել ավանդային պորտֆելի մոտ 6% աճ: Տարվա ընթացքում Բանկի ընդհանուր ակտիվներն ավելացան շուրջ 9%-ով, իսկ պարտավորությունները՝ շուրջ 11%-ով:

Ընդհանուր կապիտալի մեծությամբ Բանկը, ինչպես և նախորդ տարիներին, պահպանեց ՀՀ բանկային համակարգի առաջատարի դիրքը:

Հանդիսանալով ՀՀ գյուղատնտեսության թիվ մեկ ֆինանսավորողը՝ 2014 թվականին Բանկը հաճախորդների առջև հանդես եկավ վարկավորման նոր՝ առավել մրցունակ լուծումներով, ինչպես նաև վերանայեց գործող վարկատեսակների պայմանները՝ դարձնելով դրանք գյուղացիական տնտեսությունների համար ավելի հասանելի: Կարևորելով գյուղատնտեսության ճյուղերի զարգացումը՝ մենք շարունակում ենք արդյունավետ համագործակցությունը պետության համապատասխան մարմինների և գյուղացիական տնտեսություն վարող հաճախորդների հետ ոլորտի բարգավաճման համար անհրաժեշտ բարենպաստ պայմանների բարելավման նպատակով:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2014 թվականի ընթացքում Բանկը շարունակեց քարտային պրոդուկտների զարգացման և հասարակության շրջանում անկանխիկ վճարումների մշակույթի ձևավորման ակտիվ քաղաքականությունը, որի արդյունքում տարեվերջին արձանագրվեց վճարային գործառնությունների 22% աճ:

Հաշվետու տարում Visa և MasterCard համակարգերի քարտերով համացանցում անվտանգ վճարումներ կատարելու նպատակով ներդրվեց 3D-Secure համակարգը, թողարկվեց American Express վճարային համակարգի երրորդ՝ ավելի լայն սեգմենտի համար նախատեսված American Express Cashback քարտը, ընդլայնվեց քարտերի սպասարկման ցանցը: Բանկի հաստատուն քայլերը քարտային պրոդուկտների շուկայում նպաստել են առողջ մրցակցության ձևավորմանը, ինչը հիանալի հնարավորություն է ոլորտի ենթակառուցվածքի զարգացման և և հայ սպառողին անկանխիկ վճարումների լավագույն լուծումներ առաջարկելու համար:

Փոխանցումների շուկայում Բանկը ևս ունեցավ նոր ձեռքբերումներ, մասնավորապես ներդրվեցին արագ դրամական փոխանցումների 4 նոր համակարգեր՝
«Converse Transfer», «Sigue Money», «Անելիք_ Online» և «Tandem Transfers», ինչը նպաստեց ստացվող և ուղարկվող փոխանցումների քանակի ավելացմանը:

Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված քաղաքականության շրջանակներում 2014 թվականի ընթացքում Բանկի կողմից իրականացվեցին մի շարք էկոլոգիական և սոցիալ-կորպորատիվ միջոցառումներ, ներդրվեցին նոր բանկային պրոդուկտներ, կիրառության մեջ դրվեցին հաճախորդների սպասարկման որակի բարելավմանն ուղղված նորարարական սարքավորումներ, ինչպես նաև թողարկվեցին բնապահպանությունը քարոզող ուսուցողական տեսահոլովակներ.

- Բանկի ֆինանսավորմամբ այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման նպատակով 10 մասնաճյուղերում և 6 սահմանամերձ գյուղերում տեղադրվեցին արևային ջրատաքացուցիչներ,
- հաճախորդների սպասարկումն առավել արդյունավետ և արագ դարձնելու նպատակով, ինչպես նաև առաջնորդվելով թղթի խնայողության գաղափարով՝ Բանկի 29 մասնաճյուղերում տեղադրվեցին տեղեկատվական դյուրակիր էկրաններ, որոնք հնարավորություն են տալիս խուսափել մեծածավալ տպագրությունից և պարտադիր տեղեկատվական նյութերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով,
- «ԱԳԲԱ Լիզինգ» դուստր ընկերության կողմից ստեղծվեց «GREEN LEASING» ենթաբրենդը, որի շրջանակներում ֆինանսավորվում է էներգախնայող և շրջակա միջավայրը քիչ աղտոտող սարքավորումների և տրանսպորտային միջոցների ձեռքբերումը,
- նոր ֆունկցիոնալ հնարավորություններով համալրվեց ACBA Online համակարգը, ինչը թույլ տվեց մեր հաճախորդներին օգտվել ավելի շատ online ծառայություններից՝ խնայելով իրենց ժամանակը և զգալիորեն կրճատելով տպագրված թղթի քանակությունը:

ՀՀ բանկային համակարգի հաճախորդների շուրջ 13%-ը սպասարկվում է
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկում: Օրեցօր աճող մրցակցային պայմաններում մենք կարևորում ենք մեր հաճախորդների գոհունակությունը սպասարկման որակի և մատուցվող ծառայությունների վերաբերյալ: Այդ նպատակով Բանկում ներդրվեց և կիրառում ստացավ հաճախորդների հավատարմությունը գնահատող միջազգային
NPS (Net Promote Score) գործակիցը, ինչը թույլ է տալիս մեզ մշտապես հետևել մեր հաճախորդների գոհունակության ցուցանիշին: Մեր Բանկի ծառայությունները հաճախորդների համար առավել հասանելի դարձնելու նպատակով 2014 թվականի ընթացքում բացվեցին 7 նոր մասնաճյուղեր, ավելացավ բանկոմատների և կանխիկի մուտքագրման տերմինալների քանակը, իսկ Բանկի անխափան աշխատանքն ապահովող, նոր գաղափարներ իրագործող և հաճախորդների բարձրակարգ սպասարկումն իրականացնող թիմում ներգրավված մասնագետների թիվը հասավ 1142-ի:

Ամփոփելով 2014 թվականի արդյունքները՝ կարող եմ հպարտությամբ փաստել, որ նույնիսկ ոչ այնքան կայուն ֆինանսական պայմաններում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի նվիրյալ թիմի միահամուռ աշխատանքի արդյունքում մեզ հաջողվեց պահպանել տարիների ընթացքում ձևավորված արժեքները և ստեղծել մեր հաճախորդների հետ փոխշահավետ և երկարաժամկետ համագործակցության առաջընթացի նոր ուղիներ:

**Հարգանքով՝**
**Հակոբ Անդրեասյան**
**Գլխավոր գործադիր տնօրեն**

Grant Thornton

# Անկախ աուդիտորի եզրակացություն

**Գրանթ Թորնթոն ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

**Grant Thornton CJSC**
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և խորհրդին.

Մեր կողմից իրականացվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության և իր դուստր ընկերությունների (այսուհետև միասին՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ ծանոթագրությունները:

*Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Խմբի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության և դուստր ընկերությունների՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Վահագն Փայան
Աուդիտոր

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
25 մարտ 2015թ.
ք. Երևան

ԲԱԺԻՆ 1

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

# ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԵՋ




- ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները կազմում են շուրջ **3 տրլն ՀՀ դրամ** (մոտ 7 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը **16%-ով** գերազանցում է 2013թ.-ի ցուցանիշը
- Բանկի ակտիվների տեսակարար կշիռը ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվների մեջ կազմում է **8.5%**
- ՀՀ բանկային համակարգում Բանկը զբաղեցնում է **5-րդ տեղը** ընդհանուր ակտիվների մեծությամբ

# ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




- Բանկի ընդհանուր ակտիվներն աճել են **8.7%-ով** և տարեվերջին կազմել են շուրջ **291 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 613 մլն ԱՄՆ դոլար)
- Շուրջ **3%-ով** աճել են Բանկի դրամական միջոցները՝ կազմելով ընդհանուր ակտիվների **22.2%-ը**
- Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների (ներառյալ հաշվեգրված տոկոսները) մեծությունը կազմել է ընդհանուր ակտիվների **63.3%-ը**

# ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵՋ




## Ընդհանուր կապիտալի մեծությամբ Բանկը շարունակում է զբաղեցնել 1-ին տեղը

- ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը 2014թ.-ի վերջի դրությամբ կազմել է շուրջ **469 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 988 մլն ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը **2.9%-ով**

- 2014թ.-ին Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալում կազմել է շուրջ **12%-ը**

# ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




- Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է շուրջ **54 մլրդ ՀՀ դրամ** (ավելի քան 114 մլն ԱՄՆ դոլար), ինչը **0.3%-ով** ավել է 2013թ.-ի ցուցանիշից

- Բանկի կանոնադրական կապիտալի մեծությունը կազմել է **30 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 63 մլն ԱՄՆ դոլար)

## ՇԱՀՈՒՅԹ

# ԲԱՆԿԻ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




- 2014թ.-ի միջազգային ֆինանսական ճգնաժամի արդյունքում նախորդ տարվա համեմատ ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթի ծավալը նվազել է **44%**՝ հասնելով շուրջ **21 մլրդ ՀՀ դրամի** (մոտ 45 մլն ԱՄՆ դոլար), իսկ Բանկի զուտ շահույթի ծավալը կազմել է շուրջ **306 մլն ՀՀ դրամ** (մոտ 644 հազար ԱՄՆ դոլար)
- ՀՀ բանկային համակարգի զուտ շահույթի ծավալի մեջ Բանկի մասնաբաժինը կազմել է **1.4%**

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ




- ՀՀ բանկային համակարգի պարտավորությունները հաշվետու տարում կազմել են շուրջ **3 տրլն ՀՀ դրամ** (մոտ 6 մլրդ ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը շուրջ **18%-ով**
- Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգի պարտավորությունների ծավալի մեջ կազմում է **8%**

# ԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




- Բանկի ընդհանուր պարտավորությունները 2014թ.-ի տարեվերջին կազմել են շուրջ **237 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 500 մլն ԱՄՆ դոլար)
- Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների ծավալն ավելացել է գրեթե **11%-ով**, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ծավալի աճով

ԲԱԺԻՆ 2

# ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

# ԲԱՆԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՑՊԱՀԱՆՋ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




• Բանկի ավանդային պորտֆելը տարեվերջին կազմել է ավելի քան **96 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 203 մլն ԱՄՆ դոլար)

• Բանկում ներդրված ավանդների ծավալն ավելացել է **16.1%-ով**

• Ավանդային պորտֆելը կազմում է Բանկի ընդհանուր պարտավորությունների շուրջ **19%-ը**

# ԲԱՆԿԻ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ




• Իրավաբանական անձանց կողմից ներդրված ավանդների ծավալն աճել է **32.2%-ով**՝ տարեվերջին գերազանցելով **21 մլրդ ՀՀ դրամը** (մոտ 45 մլն ԱՄՆ դոլար)

• Ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդների ծավալը կազմել է շուրջ **75 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 156 մլն ԱՄՆ դոլար), ինչը **12.3%-ով** ավել է 2013թ.-ի տարեվերջի ցուցանիշից

• Իրավաբանական անձանց ավանդների մասնաբաժինը Բանկի ավանդային պորտֆելում կազմել է շուրջ **21.9%**, իսկ ֆիզիկական անձանց ավանդների մասնաբաժինը՝ **78.1%**

• Ցպահանջ ավանդների մեծությունն աճել է **18.4%-ով**՝ կազմելով գրեթե **25 մլրդ ՀՀ դրամ** (ավելի քան 52 մլն ԱՄՆ դոլար)

• Ժամկետային ավանդների ցուցանիշն աճել է **15.4%-ով**՝ հասնելով շուրջ **72 մլրդ ՀՀ դրամի** (մոտ 151 մլն ԱՄՆ դոլար)

• Ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալները Բանկի ավանդային պորտֆելում տարեվերջին կազմել են համապատասխանաբար **10.5% և 30.2%**

ԲԱԺԻՆ 3

# ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

# ԲԱՆԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




• Բանկի վարկային պորտֆելի մեծությունը՝ ներառյալ հաշվեգրված տոկոսները, կազմել է շուրջ **184 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 388 մլն ԱՄՆ դոլար)

• Վարկային պորտֆելը հաշվետու տարում ավելացել է շուրջ **9%**-ով

# ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ




• Ֆիզիկական անձանց տրված վարկերը և փոխատվությունները՝ ներառյալ հաշվեգրված տոկոսները, աճել են **19.2%-ով**՝ հասնելով շուրջ **119 մլրդ ՀՀ դրամի** (մոտ 250 մլն ԱՄՆ դոլար) և կազմում է վարկային պորտֆելի **35.7%-ը**

• Իրավաբանական անձանց բաժնեմասը Բանկի վարկային պորտֆելում կազմել է **64.3%** և հաշվեգրված տոկոսների հետ միասին տարեվերջին հասել է շուրջ **66 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 139 մլն ԱՄՆ դոլար)

# ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

## Բանկն առաջատարն է գյուղատնտեսության վարկավորման շուկայում




- Գյուղատնտեսական վարկեր
- Առևտրային վարկեր
- Սպառողական վարկեր, այդ թվում վարկային գծեր
- Հիփոթեք

## ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԱՌԱՆՑ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝

գերակշռող մասնաբաժինը զբաղեցրել են գյուղատնտեսական վարկերը՝ **35%** և կազմել են շուրջ **62 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 130 մլն ԱՄՆ դոլար), ինչը **20.4%-ով** ավել է նախորդ տարվա ցուցանիշից

առևտրային վարկերը զբաղեցրել են **33%** և կազմել են շուրջ **59 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 124 մլն ԱՄՆ դոլար)

սպառողական վարկերի ընդհանուր ծավալը՝ ներառյալ վարկային գծերը և հիփոթեքային վարկերը աճել է շուրջ **13%-ով**՝ հասնելով ավելի քան **56 մլրդ ՀՀ դրամի** (մոտ 118 մլն ԱՄՆ դոլար) և կազմել է վարկային պորտֆելի **32%-ը**

# ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ




• Բանկը վարկավորում է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը
• Նախորդ տարվա ցուցանիշների համեմատ տրամադրված վարկերի (ներառյալ հաշվեգրված տոկոսները) ծավալների աճ է գրանցվել հետևյալ ոլորտներում՝

- գյուղատնտեսություն՝ **33%**
- առևտուր՝ **7%**
- ծառայություններ՝ **23%**
- սպառողական, այդ թվում հիփոթեքային՝ **11%**

ԲԱԺԻՆ 4

# ՔԱՐՏԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ

# ՔԱՐՏԱՅԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ




- Նախորդ տարվա համեմատ Բանկի վճարային քարտերի քանակն աճել է **6.3%-ով**՝ կազմելով ՀՀ բանկային համակարգի վճարային քարտերի քանակի շուրջ **11%-ը**
- Վճարային քարտերի ընդհանուր քանակի աճը հիմնականում պայմանավորված է **American Express և Visa** վճարային համակարգերի քարտերի քանակի աճով՝ **22%** և **25%** համապատասխանաբար
- Քարտերով կատարված գործառնությունների քանակն աճել է շուրջ **21%-ով**, ընդ որում՝ վճարային գործառնությունների ծավալի աճը կազմել է **22%**
- Բանկի և American Express ընկերության համագործակցության արդյունքում թողարկվեց **American Express Cashback** քարտը՝ հեղինակավոր վճարային համակարգի թվով երրորդ քարտատեսակը Հայաստանում

# ԲԱՆԿԻ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՆՖՐԱՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Բանկն առաջատարն է
**և՛ բանկոմատների, և՛ POS տերմինալների**
ցանցերի մեծությամբ




- Բանկի կողմից տեղադրված բանկոմատների թիվը հաշվետու տարում գերազանցել է **200-ը**՝ նախորդ տարվա ցուցանիշի համեմատ աճելով գրեթե **20%-ով**
- Բանկի՝ ՀՀ ողջ տարածքով սփռված բանկոմատների ցանցը կազմել է ՀՀ բանկային համակարգի բանկոմատների ցանցի շուրջ **15%-ը**
- Բանկն իրականացնում է վճարային քարտերի սպասարկում շուրջ **4000** առևտրի և սպասարկման կետերում
- **Visa** և **MasterCard** վճարային համակարգերի քարտերով համացանցում անվտանգ վճարումներ կատարելու նպատակով ներդրվել է **3D Secure** համակարգ

ԲԱԺԻՆ 5

# ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒԿԱ

# ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ԱՐԱԳ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ




• Դրամական փոխանցումների քանակի աճի տենդենցը շարունակվել է նաև 2014թ.-ին.

- ստացված փոխանցումների քանակն աճել է **4%-ով**

- ուղարկված փոխանցումների քանակի աճը կազմել է շուրջ **36%**

• Ստացված դրամական փոխանցումների ծավալը հաշվետու տարում կազմել է շուրջ **100 մլրդ ՀՀ դրամ** (210 մլն ԱՄՆ դոլար), իսկ ուղարկված փոխանցումների ծավալը գերազանցել է **8 մլրդ ՀՀ դրամը** (17.6 մլն ԱՄՆ դոլար)

• Հաշվետու տարում ներդրվել է արագ դրամական փոխանցումենի 4 նոր համակարգ՝ **«Converse Transfer», «Sigue Money», «Անելիք_Online» և «Tandem Transfers»**

ԲԱԺԻՆ 6

# ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

# ԱՆՁՆԱԿԱԶՄ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ




• Բանկն աշխատանքով ապահովում է **1142 անձի** և սպասարկում է շուրջ **300 հազար հաճախորդ**

• Հաճախորդների թիվը հաշվետու տարում ավելացել է **6.3%-ով** և կազմում է ՀՀ բանկային համակարգի հաճախորդների շուրջ **13%-ը**

# ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ




• 2014թ.-ի ընթացքում բացվել է **7 նոր մասնաճյուղ,** որոնց ընդհանուր թիվը կազմել է **54**

• Հաճախորդների սպասարկման գործընթացի բարելավման նպատակով Բանկի **6 մասնաճյուղերում** տեղադրվել են թվով **9 վճարային տերմինալներ** (cash-in սարքավորումներ), որոնց թիվը տարեվերջին հասել է **78-ի**

• 2014թ.-ի ընթացքում **29 մասնաճյուղերում** տեղադրվել են տեղեկատվական դյուրակիր էկրաններ, որոնք հնարավորություն են տալիս էլեկտրոնային տարբերակով ներկայացնել պարտադիր տեղեկատվական նյութերը և համակենտրոնացված մեխանիզմի շնորհիվ իրականացնել անհրաժեշտ փոփոխությունները: Դյուրակիր էկրանները նաև նախատեսված են հաճախորդների կողմից սպասարկման որակի գնահատման համար

ԲԱԺԻՆ 7

# ՀԱՄԱՅԱՆՑ

ՀԱՄԱՑԱՆՑ

# ԲԱՆԿԻ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԵՐԸ




■ «ACBA ON-LINE» համակարգով կատարված գործարքների քանակի դինամիկա




■ «ACBA ON-LINE» համակարգով կատարված գործարքների ծավալի դինամիկա

• Հաշվետու տարում **ACBA ON-LINE** համակարգի միջոցով իրականացված գործարքների թե ծավալների, և թե քանակների աճի միտումը պահպանվել է՝

- գործարքների քանակը 2014թ.-ին աճել **է 34%-ով**
- գործարքների ծավալի աճը 2013 տարեվերջի համեմատ կազմել է **29%**

• Բանկի պաշտոնական **Facebook**-յան էջի հետևորդների քանակը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ավելացել է շուրջ **104%-ով** և տարեվերջին գերազանցել է **50** հազարը

ԲԱԺԻՆ 8

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ




1

Հայաստանի 6 սահմանամերձ գյուղերի մանկապարտեզներում և նախակրթարաններում, ինչպես նաև Բանկի 10 մասնաճյուղերում շրջակա միջավայրի պահպանման և այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման արշավների շրջանակներում տեղադրվել են արևային ջրատաքացուցիչներ

2

Բանկը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացրել է Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառում-համերգ

3

Բանկի աջակցությամբ յուրաքանչյուր տարի ֆրանկոֆոնիայի շրջանակներում իրականացվում են մի շարք մշակութային միջոցառումներ

4

Բանկը հանդիսանում է Հայաստանում ֆրանսիական համալսարանի հովանավորը, որտեղ 2014թ.-ին Բանկի ֆինանսավորմամբ հիմնադրվեց «Բանկային գործ և ապահովագրություն» ծրագիրը

5

Բանկի աջակցությամբ և հովանավորությամբ կազմակերպվել է «Հայկական կամուրջներ» խորագրով պատմամշակութային ցուցահանդես

6

Իրականացվել է բնապահպանությանն ուղղված արշավ՝ «ԿԱՆԱՉԸ ՄԵՐ ԳՈՒՅՆՆ Է» խորագրով

7

Visa ԲԱՐԵՐԱՐ քարտի բարեգործական ծրագրի շրջանակներում «Վորլդ Վիժըն Արմենիա» ընկերության հետ համատեղ Գավառի մանկատանը կից հիմնադրվել է կրթական կենտրոն, որտեղ մանկատան 9-18 տարեկան սաները հնարավորություն ունեն ստանալ մասնագիտական կրթություն և պատրաստվել ԲՈՒՀ-երի ընդունելությանը

ԲԱԺԻՆ 9

# «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՆԿԻ ԴՈՒՍՏՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




• Հաշվելու տարում **«ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ»** ընկերության հիմնական ֆինանսական ցուցանիշներով գրանցվել է աճ՝

- ակտիվներն աճել են մոտ **21%-ով** և կազմել են շուրջ **15 մլրդ ՀՀ դրամ** (ավելի քան 31 մլն ԱՄՆ դոլար)

- ընդհանուր կապիտալը տարեվերջին կազմել է ավելի քան **3 մլրդ ՀՀ դրամ** (մոտ 7 մլն ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը **4.6%-ով**

- պարտավորությունների մեծությունն աճել է մոտ **25%-ով** և կազմել է շուրջ **12 մլրդ ՀՀ դրամ** (ավելի քան 24 մլն ԱՄՆ դոլար)

• 2014թ.-ին ընկերության զուտ շահույթը կազմել է շուրջ **138 մլն ՀՀ դրամ** (մոտ 291 հազար ԱՄՆ դոլար)

• Լիզինգի պորտֆելը 2013թ.-ի համեմատ աճել է **21%-ով**

• 2014թ.-ին «ԱԳԲԱ Լիզինգ» ընկերության հետ համագործակցող տեղական և միջազգային մատակարարների քանակն ավելացել է շուրջ **30%-ով՝** հասնելով **150-ի**:

• Ստեղծվել է **«GREEN LEASING»** ենթաբրենդը, որի շրջանակներում ֆինանսավորվում է էներգախնայող, էներգոէֆեկտիվ, ռեսուրսախնայող և շրջակա միջավայրը քիչ աղտոտող սարքավորումների և տրանսպորտային միջոցների ձեռքբերումը

• Ներդրվել է շուկայում ֆիզիկական անձանց տրամադրվող առաջին սպառողական լիզինգային պրոդուկտը՝ **«Էքսպրես ավտոլիզինգ»**